



ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆԻ ՎԵՐԱԲԱՑՈՒՄԸ

Սեպտեմբերի 6-ին, երկուշաբթի օրը, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ տեղի ունեցավ հոգևոր ճեմարանի 1976—77 ուսումնական տարեշրջանի բացման հանդիսությունը:

Հանդիսությանը մասնակցում էին Մայր Աթոռի միաբանությունը, մայրավանքի պաշտոնեությունը, հոգևոր ճեմարանի դասախոսական կազմը և ուսանողությունը:

Թիվ արտասանված «Հայր մեր»-ից հետո ճեմարանի սաները երգում են «Աշակերտք Քրիստոսի» և «Որք զարդարեցին» շարականները: Ապա հոգևոր ճեմարանի փոխ-տեսուչ տ. Անանիա վրդ. Արաբաջյանն ընթերցում է Ավետարանից «Սերմնացանի առակը» (Մարկոս գլ. Դ): Ավետարանի ընթերցումից հետո ճեմարանի Գլխարանի սան Բյուզանդ Գալայճյանը Նարեկից ընթերցում է սուրբ Հոգուն ուղղված աղոթք-աղերսը (բան ԼԴ):

Այնուհետև հանդիսության բացման խոսքով հանդես է գալիս հոգևոր ճեմարանի տեսուչ տ. Հովհաննես ավագ քհն. Մարուքյանը: Իր խոսքի մեջ տեսուչ հայրը վեր է հանում ս. Էջմիածնի հոգևոր կրթարանի դերը և նշանակությունը մեր ժողովրդի հոգևոր ծառայության ասպարեզում ինչպես անցյալում, այնպես և ներկա ժամանակներում: Այնուհետև վստահեցնում է Վեհափառ Հայրապետին, որ տեսչությունը, դասախոսական կազմը և ուսանողությունը բարեխղճորեն կկատարեն իրենց պարտականությունները այս ուսումնական տարում ևս՝ հուրախություն Հայոց Հայրապետի սրտի:

Տեսուչ հայրն ապա հրավիրում է Վեհափառ Հայրապետին Իր պատգամը և օրհնությունը տալու ճեմարանի դասախոսությանն ու ուսանողությանը, 1976—77 ուսումնական տարվա առիթով: Իր պատգամի մեջ Նորին Սրբությունը հայրաբար ողջունում է դասախոսական կազմին և ուսանողությանը, որոնք ամառային արձակուրդներից հետո վերադարձել են ճեմարան կազդուրված, եռանդով լի՝ կատարելու համար իրենց աշխատանքներն ու պարտականությունները ճեմարանի հարկի տակ:

Հայոց Հայրապետը կարևորությամբ ընդգծում է ուսանողության ուսումնառության մեջ ցուցաբերելիք ջանասիրությունը և կազմակերպվածությունը, ինչպես նաև նրանց վարք ու բարքի, առօրյա կենցաղի կանոնավորությունն ու նվիրվածությունը՝ լինելու համար ոչ միայն ուսման ու գիտության մարդիկ, այլ նաև հավատքի, աղոթքի ու նվիրումի անձնավորություններ, ինչ որ վայել է հոգևոր ճեմարանի ուսանողին:

Վեհափառ Հայրապետն օրհնում է ճեմարանի վերաբացման առթիվ դասախոսական կազմին և ուսանողությանը՝ նրանց աշխատանքներին մաղթելով հաջողություն և արդյունավետություն:

Այս տարի էլ ճեմարանի դասախոսական կազմը գլխավորում է Վեհափառ Հայրապետը: Փոխ-տեսուչ է նշանակվել Մայր Աթոռի միաբան տ. Անանիա վրդ. Արաբաջյանը: Ուսուցչական կազմի մեջ փոփոխություն գրեթե չի կատարվել:

Հոգևոր ճեմարանի այս տարվա ուսանող-

ղությունը 31 հոգի է՝ բաժանված չորս դասարանների վրա.

Ա դասարան՝ 6 հոգի.
Գ դասարան՝ 8 հոգի.
Ա լսարան՝ 10 հոգի.
Գ լսարան՝ 7 հոգի։

Սեպտեմբերի 7-ին, երեքշաբթի օրը, ժամը 9.30-ին, հոգևոր ճեմարանի հարկից ներս հնչում է ուսումնական տարվա առաջին զանգը, և ճեմարանում սկսվում են կանոնավորությամբ 1976—77 ուս. տարվա դասավանդությունները։